№ 115 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9 1890 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9 № 115

ՏԱՍՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Իդական բարձրագոյն ուսում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Երևանից. Նամակ Հին-Նախիջևանից. Նամակ Վաղարշապատից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կ. Պոլսի ազգային հիւանդանոցը. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Երևանեան նահանգում.

ԻԴԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՈՒՍՈՒՄ

—

Կան հարցեր, որոնք թէև շատ հին են, թէև վաղուց համարվում են տեսականապէս պարզված, բայց և այնպէս գործնական կողմից առաջ չեն գնում.—այդպիսի հարցերիցն է և կանանց բարձրագոյն ուսման հարցը:

Ամբողջ աշխարհի գրականութիւնը երկար տարիներից ի վեր զբաղված է այդ հարցով. երկար տարիներից ի վեր շատ մտածողներ և գրողներ դրան են նուիրել իրանց ամբողջ ոյժը և գրիչը. համարեա ամեն տեղ իդական բարձրագոյն կրթութեան կողմնակիցները և հակառակորդները կատաղի կռիւ են մղել. իրանք փոքր ի շատէ քաղաքակիրթ երկրների կանայք փորձ են փորձել ապացուցանելու թերահաւատներին, որ կինը զուրկ չէ այն շնորհքից, որով նա կարող է և բարձր ուսում ստանալ և անկախ աշխատանքով զբաղվել. մինչև իսկ կանայք շատ անգամ փառաւոր կերպով աւարտելով բարձրագոյն դպրոցները և մրցանելով գործնական կեանքի մէջ ապացուցել են, որ կարող են լինել լաւ բժիշկ, լաւ փաստաբան, լաւ քարոզիչ, լաւ դասատու և այլն: Բայց չը նայած այդ բոլորին, չը նայած պերճախօս փաստերին, այնու ամենայնիւ դեռ բաւական մեծ թիւով են այն մարդիկ, որոնք դէմ են կանանց բարձրագոյն կրթութեան, որոնք միշտ այն հայեցակէտն են պաշտպանում, որ բարձրագոյն ուսումը կանանց համար աւելորդ է, և որ կինը անընդունակ է որ և է անկախ պաշտօն վարելու, և իրան նուիրելու հասարակական այնպիսի անկախ գործունէութեան, ինչպիսին ունի տղամարդը:

Ահա այդ պատճառով իսկ անկարելի է առանց ուշադրութեան թողնել այն բոլոր փաստերը և հիմնարկութիւնները, որոնք իրանց գոյութեամբ ապացուցանում են, թէ անմիտ են կանանց բարձրագոյն ուսման թշնամիների կարծիքները, հաստատելով որ կինը ընդունակ է հասկանալու բարձրագոյն ուսման զինը, ընդունակ լինելով մի և նոյն ժամանակ իր ստացած ուսումը արժանաւոր կերպով գործադրել կեանքի մէջ:

Մենք երբէք առիթը ձեռքից բաց չենք թողել հաղորդելու ուրիշ ազգերի կանանց կեանքից այդպիսի ուրախալի փաստեր, ուրախութեամբ մատնանիշ անելով այն բոլոր դէպքերի վրա, ուր կինը երևան է եկել իբրև անկախ գործող քաղաքացի, և իբրև իր քաղաքացիական իրաւունքների պաշտպան: Իսկ այս անգամ մենք մի քանի փաստեր կը հաղորդենք այն մասին, թէ ինչ դրութեան մէջ է ռուս կնոջ բարձրագոյն ուսման հարցը Ռուսաստանում: Ռուսաստանում իդական ուսման թշնամիները շատ են եղել և այժմ էլ քիչ չեն: Մի ժամանակ ամբողջ կուսակցութիւններ և հիմնարկութիւններ դէմ էին այն բարձրագոյն իդական կուրսերին, որոնք բացվեցան կանանց համար: Այդ կուրսերը մի քանի տարի սրանից առաջ փակվեցին: Միայն մօտ մի տարի սրանից առաջ բացվեցան իդական բարձրագոյն կուրսերը: Ամբողջ Ռուսաստանում հասարակաց կարծիքը սրտաբուխ հետևում է իդական կուրսերին, ցանկալով իմանալ թէ՝ դրանք իրանց գոյութեամբ ինչ կը ապացուցանեն.—արդեօք զինք կը տան կանանց բարձրագոյն ուսման թշնամիների ձեռքը, թէ նորից կը ապացուցանեն, որ այդ հիմնարկութիւնները անհրաժեշտ են, և թէ կինը Ռուսաստանում միանգամայն ընդունակ է հասկանալու բարձրագոյն ուսման նշանակութիւնը: Ինչպէս և պէտք էր սպասել, վերջին կարծիքը ճշդվում է:

Բայդ թող փաստերը խօսեն:

Պետերբուրգի իդական բարձրագոյն կուրսերում ացեալ ուսումնական տարին ընդունվել են 144 լսողներ, 107 հոգի պատմական-լեզուաբանական ֆակուլտետում, իսկ 37 հոգի ֆիզիքա-մատեմատիկական: Դրանցից 141-ը օրիորդներ են, 2-ը մարդու գնացած կանայք և մէկն էլ այրի կին: Իսկ այս ուսումնական տարում մտածներից երեքն են մարդու գնացած կանայք: Պէտք է նկատել, որ ունկնդիրները չեն հաւաքվել միայն Պետերբուրգից կամ մօտիկ տեղերից, այլ Ռուսաստանի զանազան ծայրերից, որ շատ պարզ կերպով ապացուցանում է, թէ բարձրագոյն ուսում ստանալու գաղափարը տարածված է երկրի բոլոր տեղերի ինտելիգենտ կանանց մէջ, որոնք պետութեան ամենահեռաւոր անկիւններից անգամ շտապում են Պետերբուրգ, և յաղթելով ամեն տեսակ արգելքներին, մտնում են կուրսերը: Օրինակ, այս տարի Պետերբուրգի կուրսերը մտնողներ են եղել հետևեալ հեռաւոր տեղերից. Սիմֆերոպոլից, Թէոդոսիայից, Թիֆլիսից, Բաքուից, մինչև անգամ Ցաշկենտից, Իրկուտսկից: Մի օրիորդ կայ կուրսերի մէջ, որը եկել է հեռու Սալոնիկից, Մակեդոնիայից:

Ուշադրութեան արժանի է և այն, որ կուրսերը մտնողները ոչ միայն զանազան տեղերից են խմբվել, այլ և պատկանում են երկրի ազգաբնակութեան զանազան դասակարգերին և դաւանութիւններին. այդպէս օրինակ, կուրսերի մէջ կան և վաճառականների, և հոգևորականների, և ծառայողների, և աշխարհականների և գիւղացիների աղջիկներ:

Փորձը պարզ կերպով ցոյց է տալիս, որ կուրսերը մտնել ցանկացողների թիւը աւելանում է անդադար. ժողովրդի բոլոր շերտերից դուրս եկած օրիորդներ՝ միջնակարգ ուսում ստանալուց յետոյ ձգտում են դէպի բարձրագոյն ուսում: Փորձը ցոյց է տալիս մի և նոյն ժամանակ, որ դրանք ոչ թէ ոգևորվել են բարձրագոյն դպրոցի դիպլոմ ստանալու ունայն ձգտումով, այլ յիրաւի սովորում են, գիտութիւն են ձեռք բերում, և արտայայտում են մեծ սէր դէպի աշխատանքը: Ահա թէ ինչ է ասել այս օրերս ինքը Պետերբուրգի իդական կուրսերի դիրեկտորը, տարեկան ակտի ժամանակ, իր ճառի վերջում. „Անցեալ տարվայ փորձը մեզ բաւական հիմն է տալիս հաստատելու, որ շատ անգամ ունկնդիրներից լսած այն խօսքերը թէ՝ „մենք սովորել ենք կամենում“—լոկ դատարկ խօսքեր չեն, այլ ճշմարտութիւն: Ունկնդիր կանայք իրանց գործունէութեամբ և ուղղութեամբ ապացուցել են, որ իրանք գնահատում են գիտութիւնը և այն հիմնարկութիւնը, որը միջոց է տալիս լուսաւորվելու իրանց հոգեկան բարձրագոյն պահանջներին“:

Համոզված պիտի լինել, որ ապագայում բարձրագոյն իդական կուրսերում դրանից շատ աւելի ոգևորված դովեստներ կը յայտնվեն կանանց հասցէին:

Լուրեր են պատում, որ շուտով կը բացվեն կանանց բժշկական և ուրիշ կուրսեր.—այն ժամանակ անկասկած բարձրագոյն ուսում ստանալու փափաքը կը տարածվի կանանց աւելի լայն շրջանների մէջ և դէպի բարձրագոյն ուսում կը գրաւեն զանազան դասակարգերին և ազգութիւններին պատկանող բազմաթիւ օրիորդներ:

Բարձրագոյն ուսումը առաջ կը բերի մեր կանանց մէջ աւելի բարձր պահանջներ: Եւ այդ բարձր պահանջներին լիութիւն տալու համար այդ նոյն կանայք ստիպված կը լինեն աւելի ընդարձակ քաղաքացիական իրաւունքներ ձեռք բերելու:

Ի դէպ. իդական կուրսերում չը կայ և ոչ մի հայուհի....

Խ. Մ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Հոկտեմբերի 4-ին

Գրեթէ ամբողջ սեպտեմբեր ամիսը չորային էր անցել Երևանեան նահանգում: Սեպտեմբերի 30-ին, կիրակի, միւռոնօրհնութեան օրը, եղանակը ցրտեց ու սկսեց բաւական սառն քամի փչել: Երևանից մինչև Էջմիածին թողը աներևակայելի էր: Նախընթաց օրը և տօնի օրը հաւաքվել էր Էջմիածնում և Վաղարշապատում մօտ 10 հազար ժողովուրդ թէ Կովկասի, թէ Անդրկովկասի և թէ Ռուսաստանի այլ և այլ տեղերից: Կային ուխտաւորներ և Թիւրքիայից (թէև սակաւաթիւ), Պարսկաստանից և նոյն իսկ Եալա կղզուց և այլն:

Կարգը պահպանում էին մօտ 200 զինուորներ, որոնց կէսը բուն ռուս սօլդատներ էին, իսկ միւս կէսը հայ նորակոչ զինուորներ էին: Այդ վերջինների նուագախումբը ածում էր տօնի ժամանակ: Էջմիածնում և Վաղարշապատում գումարված ժողովրդի մեծ մասը ամբոխին էր պատկանում, իսկ ինտելիգենցիան շատ քիչ ներկայացուցիչներ ունէր:

Ամբոխը գլխաւորապէս Վաղարշապատում էր կենտրօնացած, ապա բաց օդի տակ, Ներսէսի լճի շուրջը և անտառի կողմն էին երևում ուխտաւորներ: Վանքի պարիսպում համեմատաբար քիչ ժողովուրդ կար: Մայր-եկեղեցի մտնելը թողնում էին ուխտաւորներին տոմսակներով: Սակայն պատարագի և միւռոնօրհնութեան ժամանակ եկարողացաւ օդիահանութիւնից այն օգուտը ստանալ, ինչ որ ստանում էր անցեալներում: Հիմա արաղ քաշելը դարձել է, նոյն իսկ ոչ արդիւնաւէտ և վնաս բերող զբաղմունք, քանի որ օդի պատրաստութեան վրա արած ուրիշ ծախսերը չը հաշված, 5 ռուբլի արժեցող օդի իւրաքանչիւր վեդրօից (դա էլ լաւ տարիների գինն է) գիւղացին վճարում է ակցիզ 2 ր. 40 կոպէկ: Իսկ ինչ որ վերաբերում է Աշտարակի գինուն, դա լաւ գինի չը լինելով, շատ էժան է ծախվում, —վեդրօն 1 ռուբլիով: Աշտարակում պատրաստվում է միմիայն սպիտակ գինին, այն էլ շատ նահապետական ձևով: Գինին միշտ պղտոր է, սաստիկ թունդ է և համեղ չէ: Գինին պատրաստելու նոր, կատարելագործված ձևը աշտարակեցին չը գիտէ և այդ պատճառով գիւղում արդիւնաբերված գինին շատ չէ գնահատվում:

Եւ ահա, որովհետև ակցիզի մոցնելու պատճառով խաղողից օղի քաշելը արդէն ձեռնտու չէ գիւղացու համար, գինին էլ հնացած ձևով պատրաստվելով՝ առնող չունի,—այդ պատճառով Աշտարակի այգիները այլ ևս չեն տալիս գիւղի բնակիչներին իրանց առաջվայ եկամուտները և գիւղացիները ստիպված են այժմ, բացի իրանց վաղեմի այգեգործութիւնից, որոնել կեանքի ապրուստի համար ուրիշ, կողմնակի աղբիւրներ՝ մասամբ առևտուր և արհեստներ, մասամբ էլ վերուցանք: Այժմ գիւղացիք սկսեցին գիւղի մօտակայ դէմի (չը ջրվող) քարքարոտ հողերը (որոնք արքունի հողեր են) վարել և ցանել: Բայց այդ հողերից ստացվող արդիւնքը չէ համապատասխանում նրանց մշակութեան վրա գործ դրվող դժոխային աշխատանքին. այդ հողերի վրա բուսնող ցորենը, որի արդիւնքի մի յայտնի տոկոսը գիւղացին այնու ամենայնիւ պէտք է վճարէ տերութեանը, տալիս է շատ շատ մէկին՝ չորս կամ հինգ: Այդ ամբողջ ամայի, քարքարոտ դաշտերը, եթէ ջրվէին, դուցէ միմիայն խաղողի պլանտացիների համար պէտք կը դային:

Աշտարակի այգիները համարվում են գիւղացիների անձնական սեփականութիւն. Աշտարակում չը կան ոչ համայնական, ոչ էլ միւքաղարների հողեր, այլ մինչև վերջին ժամանակները իւրաքանչիւր այգի համարվում էր գիւղական մի մի ընտանիքի բացառական սեփականութիւն: Սակայն սահմանափակութեան կատարվելուց յետոյ Աշտարակի այգիների հողն էլ ճանաչվեց արքունի հող: Գիւղացի այգեպէրը, այսպիսով, թէև այդու արդիւնքի մասը չէ հատուցանում կառավարութեանը, բայց վճարում է արքունի գանձարանին հողային հարկ այն այդուց (համեմատ նրա ընդարձակութեան), որը նա մինչև այժմ իր բացառական սեփականութիւն էր համարում, բայց, որը վերջին տարիներում յայտնվեց ար-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՆԱՀԱՆԳՈՒՄ

IX

Աշտարակը բաւական մեծ գիւղ է. նա ունի 500 ծուխ, կամ 3400-ի չափ բնակիչ (արական և իդական սեռի, մանուկների հետ հաշված): Ես կարողացայ ժողովել հետևեալ թուականներ գիւղի բնակիչների աճման մասին 1840 թվից սկսած, թուականներ, որոնք ցոյց են տալիս թէ որքան առոյգարար է գիւղի դիրքը: 1840 թվին գիւղն ունէր 120 տուն բնակիչ, 1859 թ. 220 տուն, 1873 թ. 320 տուն, 1886 թվին 380 տուն և վերջապէս այժմ 500 տունից փոքր ինչ աւելի: Ամբողջ գիւղը բաղկացած է զուտ հայ ազգաբնակութիւնից, որոնք ոչ թէ գաղթականներ են, Երևանեան նահանգի ուրիշ շատ գիւղերի բնակիչների պէս, այլ շատ հին, բնիկ ժողովուրդ են, պարսից ժամանակներից մնացած: Այդ է պատճառը, որ աշտարակեցու տիպն ու բնաւորութիւնը նշանաւոր կերպով տարբերվում է նահանգի մինչև այժմ իմ տեսած ուրիշ գիւղերի բնակիչների տիպից ու բնաւորութիւնից: Աշտարակեցին նման չէ, օրինակ, իմ տեսած հայ գիւղերի մեծ մասամբ, թէև աշխատասէր, բայց կօշտ ու կոպիտ, գրեթէ բթացրած, մեքենայ դարձած երկրագործ տարրին: Աշտարակեցին աւելի նման է փոքրիկ քաղաքի բնակչին. նա աշխոյժ է, ինտելիգենտ է, մեծ մասամբ գրագէտ է, ճարպիկ է և նոյն իսկ խորամանկ: Նա վերին աստիճանի շատախօս է և նոյն իսկ պերճախօս ու սրամիտ է: Նոյն իսկ աշտարակեցու հռչակաւոր հայհոյանքները շատ սրամիտ են....

Ես ասեցի որ ամբողջ Աշտարակը զուտ հայ տարրից է բաղկացած, միայն պէտք է աւելացնեմ, որ գիւղի մէջ բնակվում են մի քանի տասնեակ քիւրդեր և քիւրդուհիք, որոնք հայ բնակիչների աւելի հարուստ տներում ծառայութիւն են անում և բոլորն էլ խօսում են հայերէն լեզուով: Չը նայելով, որ Աշտարակը երբէք չէ պարապել վար ու ցանքով, այլ միշտ պարապել է միմիայն այգեգործութեամբ, սակայն գիւղը միշտ համարվել է և մի ժամանակ ճշմարիտ էլ եղել է նահանգի ամենահարուստ գիւղերից մէկը: Այդ հարստութիւնը աշտարակեցին ձեռք էր բերում գլխաւորապէս օղի պատրաստութիւնից, որը նա քաշում էր իր խաղողի մնացորդներից՝ իր գինին պատրաստելուց յետոյ, քանի որ մինչև վերջին ժամանակները օղիահանութեան վրա դեռ ևս ակցիզ ասված հարկը մոցրած չէր: Բայց հէնց որ մոցնվեց ակցիզը, աշտարակեցին այլ ևս չը

կեղեցին այն աստիճան լցվեց, օդը եկեղեցում այն աստիճան խեղդող դարձաւ, որ ոչ թէ միայն կանայք, բայց և տղամարդկանցից ոմանք ուշաթափ եղան և նրանց ստիպվեցան ձեռքերի վրա դուրս բերել եկեղեցուց:

Ընդհանրապէս կարգ ու կանոնը լաւ էր պահպանվել և տօնն անցաւ առանց որ և է անախորժ դէպքերի:

Տօնին ներկայ էին թէ նահանգի և թէ Երևան քաղաքի վարչութիւնների բոլոր ներկայացուցիչները: Ամբոխի մէջ նկատվում էին և մի քանի օտարազգիներ, որոնք եկել էին տօնին ներկայ գտնվելու համար լոկ հետաքրքրութիւնից շարժված: Միւռոնօրհնութիւնից յետոյ երկու թէ երեք տեղ ճաշկերոյթ էր պատրաստված. վեհարանում բարձրաստիճան անձինք էին ճաշում, իսկ մի հարիւր կամ փոքր ինչ աւելի անձինք՝ սեղանատանը: Շատերը ուխտաւորներից հիւրընկալութիւն գտան Վաղարշապատում, իրանց ծանօթների տներում:

Հանդէսը բաւական փառաւոր էր. վեհարանից մինչև մայր-եկեղեցին ընթացող հանդէսը բաց էին անում երգեցիկ խմբեր, ապա գալիս էր հոգևորականութիւնը և հանդէսը փակում էր ինքն Կաթողիկոսը ամպհովանիի տակ: Երգեցիկ խմբի երգեցողութիւնը բաւական լաւ տպաւորութիւն էր գործում իր ներդաշնակութեամբ:

Միւս օրվանից, այն է հոկտեմբերի 1-ից, ժողովուրդը հետզհետէ սկսեց թողնել Էջմիածինը: Էջմիածնից տանող ճանապարհը նորից ծածկվեց ֆուրգոններով, կառքերով, սայլերով, տրոյկաներով: Հոկտեմբերի 3-ին արդէն գրեթէ ոչ ոք չը կար Էջմիածնում՝ տօնին եկած ուխտաւորներից:

***

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

Հոկտեմբերի 2-ին

Կիրակի, սեպտեմբերի 30-ին, ս. Գէորգ եկեղեցու տօնի պատճառով, առաջին բաղմութիւն էր եկած գիւղերից, մեծ մասամբ կանայք: Այս տօնի շնորհով առաջին անգամն էր որ մեր եկեղեցին լցված տեսանք աղօթողներով: Նոյն օրը պատարագին առիթ ունեցանք յաջորդի քարոզը լսելու, որը բաւականացուցիչ կարելի էր համարել: Քարոզի բովանդակութիւնը վերաբերում էր գլխաւորապէս հասարակութեան պակասութիւններին, գլխաւորապէս նրա անտարբերութեան դէպի մատաղ սերնդի կրթութիւնը և ծնողների իրանց դաւակների վրա փչացնող ազդեցութիւնն ունենալն:

Իւրաքանչիւր տարի, եկեղեցու տօնին մեղանում մատաղ է լինում: Մատաղ անելու համար հաւաքում են ժողովրդից 50—60 ռուբլի: Պատարագի վերջում (երբ ամենքը ծնկաչոք էին) ահա տեսնում ենք, որ երկու թէ երեք մարդ մատուցարանների վրա լցրած մատաղը՝ հացի մէջ փաթաթած «համեցէք» են անում բոլորովին մէկ-մէկ: Իսկ այդ ժամանակ եկեղեցու գաւթում, որպիսի աղմուկ և աղաղակ է լինում, այդ Աստուած հեռու տանի:

Արդեօք լաւ չէր լինի, որ մատաղի սովորութիւնը վերացնելով փողը յատկացնէին խղճուկ մեր դպրոցին, եթէ ոչ ամբողջապէս, գոնէ կէսը. բայց միւս կէսը կամ մի մասը տային բազմաթիւ հայ մուրացկաններին,—հարկաւ, հարիւր անգամ լաւ կը լինէր:

Պարտք ենք համարում յայտնել, որ նոյն օրը կատարվեց և երկսեռ ուսումնարանի օրհնութիւնը: Հոգևորական դասը զգեստաւորված մտաւ օրիորդաց դպրոցի դահլիճը, սրան հետևեց հասարակութիւնը: Մի քանի՝ հանդիսին վայել եկեղեցական երգեր երգելուց և օրվայ պատշաճ ատենարան կարդալուց յետոյ, նորեկ պ. աւագ ուսուցիչը կարդաց մի ճառ:

Ճառից յետոյ աշակերտուհիներն երգեցողութեան ուսուցչի ղեկավարութեամբ խմբով երգեցին մի քանի աղգային երգեր: Դրանով վերջացաւ ամեն ինչ: Հանդէսի ժամանակ կարգ չը կար բնաւ. տղամարդիկ և պատանիները խառն ի խուռն կանգնած էին դահլիճի թէ ներսը և թէ դուրսը, թէև նստարանները դատարկ էին: Իդական սեռի կատարեալ բացակայութիւն էր նշմարվում:

Հանդէսները առ հասարակ կրթիչ նշանակութիւն ունեն ժողովրդի համար, ուրեմն դրանց ժամանակին լինելը ցանկալի է միշտ, միայն աւելի կանոնաւոր կերպով: Վերջացնելով սոյն նամակը, մենք կը ցանկանայինք և կը խնդրէինք, որ տեղիս յաջորդը յաճախակի քարոզներ խօսէր: Կենդանի խօսքը՝ եկեղեցու բեմից ասված, դուցէ աղդէ անկենդան և թմրած հասարակութեան վրա:

Ե.

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

—

Սեպտեմբերի 27-ին

Երբ եկեղեցու երեցփոխից, որն ահա եօթներորդ տարին է ոչ մի հաշիւ չէ տուել, հաշիւ են պահանջում, կան ասողներ, թէ՝ «ինչու համար եկեղեցու վերանորոգութեան հոգաբարձութիւնը իր անցեալ տարվայ հաշիւները ուղղակի ս. սինոդին է ներկայացրել, իսկ վերջին ժամանակի հաշիւները չեն բաբեհաճած կարդալ ժողովրդին»: Որպէս զի հասարակութիւնը կարողանար իմանալ, թէ եկեղեցին փող ունի, թէ պարտք անցեալ յուլիսին հաշուետուներ ընտրեց՝ երեցփոխ Զաքարեանի մատեանները և հաշիւները տեսնելու: Երեցփոխի ներկայացրած մատեանները այնպիսի ձեով է պատրաստված, որ հաշուետուները չեն կարողանում բան հասկանալ:

Երբ հասարակական շտեմարանի ապառիկ ցորենները, որը 1882 թուից մնում էր սանալու, պահանջում են (մօտ 60 խալվար) արդարանում են՝ ասելով. «տարին քեսասա է, չենք կարող տալ»:

Երբ երկսեռ դպրոցների վերանորոգութեան մասին կարծիք յայտնող է լինում. ասում են՝ «ժողովուրդը աղքատ է. այդ դժուար թէ դլուխ գայ»: Խօսելով դպրոցների չինութեան ողորմելի դրութեան մասին, կարող ենք աւելացնել, որ նրանց նիւթականն աւելի խախուտ է: Ամենայն տարի մուրացկանութեամբ դպրոց կառավարել—անկարելի է. շարունակ աստիճանաւորների, ճեմարանի ուսուցիչների և վերջապէս օտար մարդկանց օգնութեան դիմել դպրոցների համար.—դա ամօթալի գործ է:

Երբ դպրոցների հոգաբարձութիւնը, ստիպված ուսումնարանների աղքատ դրութիւնից, կամեցաւ այս տարի հասարակական հրապարակը կապալով տալու յօգուտ դպրոցների, կալուածատէրը այդ օգուտը դարձրեց իր համար, և այդպիսով կամենում է վանքի գանձարանը մի 100 ռուբլով հարստացնել, մինչ դեռ Վաղարշապատը իւրաքանչիւր տարի տալիս է առնուազն 25,000 ռուբլի եկամուտ. չը հաշուելով այն ծախսերը, որ վանքի պատճառով նա ունի:

Երբ ժողովրդի մէջից յայտնվում են մարդիկ և կարծիք են յայտնում, որ իւրաքանչիւր պաշտօնեայ, լինի նա եկեղեցու երեսփոխան, քահանայ, շինական-հասարակական գործավար կամ բարեգործական ընկերութեան տեղական վարչութեան անդամ և այլն, պարտական են իրանց ըստանձնած պաշտօնները կանոնաւոր կերպով կատարել, նրանց պատասխանը լինում է «միջոցներս չէ ներում կամ ով է մեզանից լաւ կատարել»:

Շատ դժուար է ապացուցանել Վաղարշապատի գտնէ առաջնակարգ մարդկանց, որ չէ կարելի աւելի քան 3000 ժողովուրդը թողնել բաղդի բերմունքին հիւանդութիւնների ժամանակ, առանց սեփական բժիշկ ունենալու: Եւ հէնց այդ պատճառով էլ չարաչար տուժում է ժողովուրդը, որ իր յոյսը դնում է ճեմարանի կամ զաւառական բժշկի օգնութեան վրա: Նրանցից առաջինը՝ ճեմարանի բժիշկը հոգում է աւելի քան 100 աշակերտի առողջութեան մասին. նա և վեհարանի բժիշկ է և միաբանութեան, և այդպիսով միշտ զբաղված է: Իսկ զաւառական բժիշկը հաղիւ միջոց և ժամանակ ունի իր արքունի ծառայութիւնները կատարել: Եթէ Վաղարշապատի հասարակութիւնը նիւթապէս անձեռնտաս է առանձին բժիշկ վարձել, մենք համեստօրէն մի խորհուրդ կը տայինք, որը առանձին դժուարութիւն չը պէտք է առաջ բերի:

Ինչպէս լսվում է մի հիւանդանոց պէտք է բացվի և Էջմիածնի գաւառում: Շատ լաւ կը լինէր Վաղարշապատի համար, եթէ նա դիմէր տեղական իշխանութեան միջնորդութեան՝ Վաղարշապատում, որպէս գաւառի կենտրոնում, գաւառական հիւանդանոց բանալու: Հիւանդանոցը կունենայ իր առանձին բժիշկը, մանկարարձուհին և մի քանի ֆելդշերներ իրանց բոլոր յարմարութիւններով: Հիւանդանոցում դեղ կը տրվի աղքատներին ձրիաբար: Եւ որպէս զի միջնորդութիւնը արդիւնաւոր հետևանք ունենայ, ծանր չէր լինի վաղարշապատցիներին, որ հասարակութիւնը խոստանար և հիւանդանոցի բնակարանը ինքը հոգար, որը կարծենայ, մեր կարծիքով, ոչ աւելի քան երեք հարիւր ռուբլի: Դրանով Վաղարշապատի հասարակութիւնը մեծ բարիք արած կը լինի՝ թէ նիւթապէս և թէ բարոյապէս, նախ իրան և ապա ընդհանուր դաւառի աղգաբնակութեանը:

Մ. Ե.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ռուսաստանի մէջ այժմ կան բաւական թիվ գիւղատնտեսական ընկերութիւններ: Այդ ընկերութիւնների նպատակը իսկապէս շատ մօտ է միմեանց,—բայց դրանց գործունէութեան մէջ շատ անգամ ոչինչ նմանութիւն և համերաշխութիւն չէ երևում, որովհետև այդ ընկերութիւնները միմեանց հետ ոչինչ յարաբերութիւն չունեն ոչինչ տեղեկութիւն չունեն միմեանց գործունէութեան մասին: Իւրաքանչիւրը դրանցից զբաղվում է այս և այն հարցով, առանց ուշադրութիւն դարձնելու, թէ ինչպէս է առաջ գնում այդ հարցը մի այլ նահանգում, և ինչպէս է նայում այդ հարցի վրա այնտեղի գիւղատնտեսական ընկերութիւնը: Այդ հանգամանքը, անկասկած, նպաստաւոր չէ այն ընդհանուր նպատակի համար, որ ունեն բոլոր այն ընկերութիւնները, որոնք կրում են Գիւղատնտեսական անունը: Ի նկատի ունենալով այդ հանգամանքը, ներկայումս հարց է յարուցված գիւղատնտեսական բոլոր ընկերութիւնների գործունէութիւնը միացնելու համար: Պետերբուրգի Ազատ-տնտեսական ընկերութեան առաջիկայ նստաշրջանի ընթացքում պէտք է քննվի այդ միութեան հարցը: Գիւղատնտեսական ընկերութիւնների գործունէութիւնը միացնելու մէջ են մտնում և ընդհանուր ժողովներ գումարելը, ընդհանուր օրգան հրատարակելը և այլն: Թէ որքան աջողութիւն կունենայ այդ միտքը.—դա դուշակել այժմեանից դժուար է:

—

Կիրակի օր, հոկտեմբերի 7-ին, Վանքի մայր-եկեղեցում Խորէն եպիսկոպոս Նար-բէյ քարոզ խօսեց: Այս անգամ Նար-բէյ սրբազանը բոլորովին ուրիշ ոգով խօսեց. նրա ճառը դեղեցիկ տպաւորութիւն թողեց բազմաթիւ հասարակութեան վրա: Եկեղեցու բազում Նար-բէյ եպիսկոպոսը՝ յայտնելով, որ չուտով պիտի գնայ Կ. Պոլիս՝ մնաք բարև ասեց հասարակութեանը, որը շատպեց յայտնել նրան իր համակրութիւնը այդ օրվայ քարոզի առիթով:

—

Արտասահմանի հայոց լրագիրներում կարդում ենք. «Էջմիածնի Վեհ. Կաթողիկոսին հեռագիր եկած է Պատրիարքարան, թէ Թիւրքիայի այն վարդապետներ, որոնք եպիսկոպոսանալու վկայական ստացած են, փութան ներկայ գտնվելու Էջմիածնի Միւռոնի օրհնութեան հանդիսին, վասն զի նոյն օր եպիսկոպոսական ձեռնադրութիւն պիտի կատարուի»:

—

Հարկաւոր ենք համարում հաղորդել, որ միւռոնօրհնութեան օրը Էջմիածնում ոչ մի եպիսկոպոսական ձեռնադրութիւն տեղի չէ ունեցել:

—

Ֆրանսիական մի քանի լրագիրներ հաղորդում են, որ պարիզաբնակ հայազգի Գուիդոն դը Լուսինեան իշխանի ամուսինը՝ Մարի դը Լուսինեան (աղգով Ֆրանսիացի) յանկարծամահ եղաւ. նա 43 տարեկան էր: Արտասահմանի հայոց մի լրագիր հաղորդելով այդ լուրը, իր կողմից աւելացնում է. «հանդուցեալ իշխանուհին մի քանի առիթներ

քունի հող: Բացի սրանից աշտարակեցին վճարում է կառավարութեանը, ինչպէս ամեն տեղ, և ծխահարկ ասված հարկը, տարեկան 12 ռուբլի ծուխից (լինի դա 2 թէ 20 հոգուց բաղկացած ծուխ):

Վերջապէս Աշտարակ գիւղը այլ ևս իր առաջվայ հարստութիւնը չունի: Միայն 1886 թուին բացված և Աշտարակ գիւղի միջով անցնող, Երևանից դէպի Ալէքսանդրօպոլ տանող ճանապարհը քիչ կենդանութիւն տուեց գիւղին. ճանապարհով անցնում են ճանապարհորդներ, փոխադրվում են ֆուրգոններով այլ և այլ ապրանքներ. կանգնելով գիւղում՝ անցորդներն ու ապրանքատէրերը օգուտ են տալիս գիւղին՝ պահեստի վարձ, սենեակի վարձ, կերակրի ու դարմանի վարձ հատուցանելով գիւղի բնակիչներին:

Ինքն գիւղը իր արտաքին տեսքի կողմից, գիւղի փողոցներն ու տները՝ կատարելապէս տարբերվում են մինչև այժմ իմ տեսած ուրիշ հայոց գիւղերի տիպից: Գիւղը շատ նեղ փողոցներ ունի, որոնցով (բացի մի գլխաւոր փողոցից) ոչ մի սայլ անցնել չէ կարող, այլ անցնում են միմիայն հետևակներն ու գիւղի եաբու ասված ողորմելի բեռնակիր ձիերը: Նոյն եաբու ձիերով աշտարակցին տանում է ուրիշ տեղեր (օրինակ Երևան) ծախելու համար իր գիւղի արտադրութիւնները՝ խաղողը, դեղձը, գինին և այլն.... Փողոցների նեղ լինելը բացատրվում է գետնի թանդութեամբ: Տները քարեայ տներ են, շատ անգամ երկու յարկանի. պատահում են նոյն իսկ երեք-յարկանի տներ, որոնց ստորին յարկը մեծ մասամբ ամբարների կամ պահեստների համար է ծառայում: Վառելիքի տեղ մեծ մասամբ աթար է գործածվում և շատ սակաւ կը պատահէք վառելափայտի:

Աշտարակցու տների ներսը անհամեմատ աւելի մաքուր է, քան թէ որ և է ուրիշ հայոց գիւղի տներինը. մարդկանց, կանանց ու մանուկների հագուստն էլ շատ աւելի մաքուր է: Կանայք այդտեղ շատ մաքրասէր են համարվում և մի և նոյն ժամանակ դեղեցիկ կանանց հռչակ ունեն: Ինձ աջողվեց տեսնել մի քանի կանանց և աղջիկներ. նրանց տիպը շատ դուրեկան է, ինչպէս ասում են՝ շատ աղի է, կազմուածքն էլ բաւական շնորհալի: Բացի պառաւներից կանանց մեծ մասը բաց երեսով են շրջում:

Վերև յիշեցի որ աշտարակեցիք շատ արագ կերպով աճում, բազմանում են, շնորհով իրանց աջող պայմանների՝ առողջ կլիմայի, գիւղի դեղեցիկ դիրքի և լաւ ջրի. և պէտք է աւելացնեմ, որ այդ աճելութիւնը կատարվում է ինքնաբերաբար, բնական կերպով, աղգաբնակութեան բազմանալով և ոչ թէ դրսից եկող որ և է գաղթականների աւելանալով: Աշտարակում գաղթական բնակիչ չը կայ: Բնիկ, հին, հիմնական բնակիչներ լինելով, աշտարակեցիք գուցէ այդ պատճառով էլ պահպանել են հայոց լաւ յատկութիւնները՝ աշխատասէր և աչքաբաց լինելը: Այդ աշխատասիրութեան ապացոյց կարող է համարվել՝ համայնական այժերով այն ջրանցքի կառուցանելը, որը Քասախ գետից հասցնում է առատ ջուր դէպի գիւղը: Ջրանցքը չլինելու համար աշտարակեցիք ստիպվեցան երկու տեղ ժայռերը փորել և տօնել, այսինքն ստորերկրեայ անցքեր շինել. այդ անցքերից մէկը 184 արշին, իսկ միւսը 105 արշին երկարութիւն ունի: Ամբողջ ջրանցքը նստեց համայնքին աւելի քան 3000 ռուբլի:

Զարմանալի է, որ միայն դպրոցների վերաբերմամբ աշտարակեցիք մինչև այժմ աչքաբաց չեն: Գիւղի միակ միդասեան հայոց դպրոցը շատ վատ է գնում, թէև ունի 60 հոգու չափ աշակերտներ: Իսկ իդական դպրոց մինչև այժմ գիւղում չը կայ, քանի որ աչքաբաց աշտարակեցին մինչև այժմ չէ հասկանում կնոջ համար աղամարդու հետ հաւասար տարրական ուսման անհրաժեշտութիւնը:

Գիւղում կայ և արքունի նորմալ գիւղական երկդասեան դպրոց, որը շատ ժամանակ չէ, որ հիմնվել է և արդէն միդասեան հայոց դպրոցի աջող մրցութիւն է անում, ունենալով արդէն 60-ի չափ աշակերտներ: Դպրոցի ուսուցիչները երկու հայ երիտասարդներ են. դասատուութիւնը դպրոցում ռուսերէն լեզուով է կատարվում, թէև դպրոցում աւանդվում են և հայոց լեզուն ու կրօնը:

Գիւղի ինտելիգենտ ներկայացուցիչների շրջանում ճաշեցինք Ներսէս V-ի տանը. ճաշի ժամանակ 80 տարեկան սրամիտ Թեղլար ծերունին զբաղեցնում էր մեզ իր անվերջանալի պատմութիւններով անցեալից, իր ռամկական սրամտութիւններով ու. իր տարօրինակ դատողութիւններով քաղաքականութեան մասին:

Ճաշից յետոյ մենք ճանապարհ ընկանք դէպի Երևան:

Իմ հետևեալ թղթակցութիւններիս մէջ ես կաշխատեմ նախկին թղթակցութիւններիցս մի ընդհանուր եզրակացութիւն դուրս բերել նահանգի գիւղական աղգաբնակութեան վերաբերմամբ և, ի միջի այլոց, կը յայտնեմ իմ կարծիքս Աբարանի մահալի հայ գիւղացու մասին, համեմատելով այդ գիւղացու տիպը երկրի միւս հայ գիւղացիների տիպի հետ:

Գրիգոր Արծրունի

րի մէջ, ինչպէս Հայաստանի սովի ժամանակ, իր դիմառաջութեան ապացոյցներ տուած է»։

—

«Մշակի» խմբագրութեան մէջ ստացուեցան Երևանեան Նահանգից հետևեալ ընծաները, որոնք նուիրել են զանազան անձինք Գրիգոր Արծրունու 25-ամեայ գործունէութեան առիթով, նրա ճանապարհորդութեան ժամանակ Երևանեան Նահանգում. 1) Նոր-Բայազէտցի պ. Գէորգ Ահարոնեանց նուիրել է մի փոքրիկ արծաթեայ ոսկեզօծ տուփ, 20 հատ հին դրամներով. 2) Երևանի երիտասարդութիւնը ընծայել է Բաֆֆիի՝ ձեռանկար, շրջանակի մէջ դրված մեծադիր կենդանագիրը. 3) Երևանի հայ կանանց կողմից ստացուել են՝ մի արծաթեայ ոսկեզօծ բաժակ, բաժակակալով և մի ոսկեայ գրիչ. առաջինի վրա փորագրված է Էջմիածինը, երկրորդի վրա Ս. Գայեանէի վանքը և գրված են «Կանանց իրաւանց պաշտպանին» խօսքերը. գրչի վրա գրված է՝ «ոսկէ խօսքերին ոսկէ գրիչ» բառերը. 4) Իգդիրի հայ հասարակութեան կողմից ստացուել է Կողպի աղից քանդակագործած Էջմիածնի մայր եկեղեցու շատ գեղեցիկ կաղապարը, կէս արշին բարձրութեամբ։

—

Մոսկվայի կօնսերվատորիայի պրոֆէսոր պիանիստ Զելոտտիի կօնցերտը կայացաւ հոկտեմբերի 7-ին, ցերեկը։ Շաբաթ երեկոյեան կօնցերտը չը կայացաւ անսպասելի պատճառով. հասարակութիւնը հաւաքուեց, Զելոտտի սկսեց ածել և բանից դուրս եկաւ, որ դաշնամուրն այնքան անպիտան էր, որ նա հրաժարուեց շարունակել ածելը, խնդրելով ցանկացողներին վաղը չնորհ բերել, յայտնելով մի և նոյն ժամանակ, որ չը ցանկացողները կարող են տոմսակները յետ տալ։ Երկրորդ օրը կայացաւ կօնցերտը։ Թատրոնում հաւաքված բազմաթիւ հասարակութիւնը բուռն ծափահարութիւններով վարձատրեց Զելոտտիին. նա հրաշալի է ածում։ Աչքի է ընկնում պ. Զելոտտիի ածելու տեխնիկան։ Երկրորդ և վերջին կօնցերտը կայանալու է այսօր։

—

Պ. Գրիգոր Արծրունին հոկտեմբերի 7-ին Երևանից Թիֆլիս վերադարձաւ։

—

Պ. Շանթը, Լիոնի բնական գիտութիւնների թանգարանի փոխ-տեսուչը, որ մօտերս ճանապարհորդում էր Կովկասում, սկսել է տպագրել «Lyon répudlicain» լրագրում իր ճանապարհորդութիւնը։ Կաշխատենք ընթերցողներին կարճառօտ կերպով ծանօթացնելու պ. Շանթի ճանապարհորդութեան հետ, եթէ ոչ այն պատճառով, որ նա առանձին հետաքրքրական հետազօտութիւններ է պարունակում իր մէջ, այլ գէթ ցոյց տալու համար, թէ ինչպէս են եւրոպացիք ճանաչում մեր երկիրը։

—

Հոկտեմբերի 6-ին սկսվեցին Կովկասեան Կայսերական գիւղատնտեսական ընկերութեան նիստերը։ Առաջին նիստում հաղորդվեցան ընդհանուր ժողովին միայն անցած ամառային ամիսների վերաբերեալ մի քանի տեղեկութիւններ։ Կարդացվեցաւ Երևանի նահանգապետից ստացված մի յայտարարութիւն, Երևանում գինեգործական դպրոց հիմնելու մասին։ Գինեգործական դպրոցի ծրագիրը մշակելու համար կազմվեցաւ մի յանձնաժողով։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են. «Ցայսմիկ է, որ Ալէքսանդրոպոլի հայ-կաթոլիկ հասարակութիւնը հայր Աբրահամեանի մահվանից յետոյ չունէր հոգևոր դպրոց, և վիճակի հայ-կաթոլիկ ժողովուրդը միանգամայն զրկուած էր ուսման պահանջից։ Այժմ, նորընտիր Պողոս վարդ. Նահապետեանի ջանքով նորից աշխատում են բաց անել հոգևոր դպրոց, որի շէնքը կայ, միայն պակասում էին դրամական միջոցները։ Այս տարի հասարակութիւնը շատ աշխատեց բանալ գոնէ միդասեան ծխական-եկեղեցական դպրոց, բայց արդէն ժամանակը անցնում էր ու չէր կարելի իր ժամանակին բանալ դպրոցը, հին չինութեան կարգադրութեան, ուսուցիչ չը գտնվելու, ու աշակերտների ցրված լինելու պատճառով։ Բայց ուրախալի է, որ ժողովրդի մէջ արծարծվեցաւ գոնէ դպրոցի պահանջը, և ապագայ դպրոցի յարատևութիւնը ապահովելու նպատակով, եղաւ ընդհանուր նուիրատուութիւն, որը որպէս դրդրոցական հիմնական դրամագլուխ, պիտի ծառայէ բացառապէս դպրոցի շարունակութեան համար։ Իր հօտին բարի օրինակ լինելու նպատակով, Պողոս վարդապետ Նահապետեան նուիրեց 1000 ռուբլի, օգնական քահանայ տէր-Սահակ Տէր-Աբրահամեան 100 ռ. և ժողովրդականներից մի քանիսը մինչև 300 ռ., այնպէս որ, այսօր դպրոցը ունի դրամագլուխ 1400 ռուբլի և պէտք է նուիրատուութիւնները շարունակվեն։ Արդէն Ալէքսանդրոպոլի գաւառի մի քանի գիւղերից հաւաքված է ցորենից մօտ 300 ռուբլի, մտադրութիւն կայ հաւաքել նաև մնացեալ բոլոր հայ-կաթոլիկ գիւղերից և մի որոշ դրամագլուխ հաստատելուց յետոյ, ձեռնարկել դպրոցի բացմանը։ Շատ նպատակայարմար կը լինէր, որ բոլոր հայ-կաթոլիկ գիւղացիները համաձայնվէին եկեղեցական դրամները միացնել, և կենտրոնական տեղում,—Ալէքսանդրոպոլում բանալ վիճակային դպրոց, որի բացման համար ի հարկէ պէտք է աշխատի հոգևոր կառավարութիւնը»։

—

Ներկայումս պատրաստվում են նոր տեսակի 25-ռուբլիանոցներ, որոնք շատ շուտով դուրս կը թողնվեն գործածութեան համար։

—

Ռաշտից մեզ գրում են, սեպտեմբերի 30-ից. «Այսօր տեղիս թատրոնասէրների ընկերութիւնը կատարեց իր գոյութեան երկրորդ տարեդարձի հանդէսը։ Հանդիսի համար վաղօրօք պատրաստվել էր աշակերտների երգեցիկ խումբ։ Հանդէսը բացվեց «Ինչ ուրախութիւն» երգով. յետոյ դպրոցի ուսուցիչը ճառախօսեց, բացատրելով թատրոնի նշանակութիւնը և նրա օգուտները, չը մոռանալով յիշել իր պաշտօնակից հանգուցեալ Կ. Դօվլաթբէգեանցին, որը Ռաշտում սկզբնապատճառ էր դառել թատրոնական ներկայացման 1884 թվին։ Ճառից յետոյ ընկերութեան քարտուղարը կարդաց մի տարվայ ելքն ու մուտքը։ Երևաց, որ ընկերութիւնն ունի պատրաստի դրամ 110 թուման։ Բոլոր հանդիսականները իրանց գոհունակութիւնը յայտնեցին ծափահարութիւններով։ Ընկերութեան մի քանի անդամների հրաժարվելու պատճառով, քուէարկութեամբ ընտրվեցան նորերը։ Հանդիսից յետոյ տէր Եղիա քահանան մի աղդու քարոզ խօսեց, որը մեծ տպաւորութիւն գործեց թէ երիտասարդների և թէ միտների վրա, առաջարկելով, որ մի որ և է նուէրով քաջալերեն ընկերութեան նոր անդամներին։ Ստորագրութիւն բացվեց»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. ՊՕԼՍԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՅԸ

—

«Մասիս» շաբաթաթերթը ի միջի այլոց հետեւեալն է գրում Կ. Պոլսի հայոց հիւանդանոցի մասին.

«Հիւանդանոցը սպանդանոց մըն է, ուր տղան շուտ կը թառամի, ուրկէ ծերունին աւելի շուտ կը մերձենայ գերեզմանին, և հիւանդին համար, որքան ալ թեթև ըլլայ հիւանդութիւնը, մահն աւելի հաւանական է քան փրկութիւնը։

Ի՞նչ գիտենք հիւանդանոցի մասին։—Գիտենք թէ Համբարձումին օրը Պատրիարքը պատարագ կը մատուցանէ Փրկչի մատուռին մէջ, Պէշճանի հոգւոյն պաշտօն կը կատարուի, յետոյ սեղան կը տրուի, ուր աղքին «մեծամեծները» կը նստին և բաժակներ կ՚առաջարկեն։ Գիտենք թէ՝ Սահմանադրութեան տարեդարձն ալ կը կատարուի հիւանդանոցի պարտիզին մէջ, նոյն օրն ալ սեղաններ ու բաժակներ, որոց վրայ պէտք է աւելցնել ճառեր։—Գիտենք թէ՝ մի քանի ննջեցեալներու համար ալ երբեմն պատարագ կը մատուցուի Փրկչի մատուռին մէջ ու սեղան կը տրուի։

Ասոնցմէ դուրս։

Ասոնցմէ դուրս, երբեմն երբեմն կը հրատարակուին խոշոր տեղեկագրեր, զոր խիստ քիչերը կը կարդան, զի խիստ քիչերը բան մը կը հասկընան։

Չը մոռանանք նաև որ լրագիրներն ամեն օր կը հրատարակեն նուիրատուներու անունները։

Ուրիշ ոչինչ չը գիտենք։

Բայց թէ օր մը միայն անծանօթ կերպով անցնինք հիւանդանոցին մէջ, կարծեմ թէ սրտերնիս երկար ատեն խորին մելամաղձութեամբ համակուած պիտի մնայ։

Մտենանք դպրոցը. զանազան կողմերէ հոն հաւաքած են խեղճ տղաքներ. ինչ կը ճաշեն։

Առաւօտ է։ Տիլիմ մը չոր հաց, ոչ կաթ, ոչ սուրճ, ոչ քահուէ, ոչ պուդ. չոր չոր հաց։

Ցերեկ է։ Տիլիմ մը հաց, և քիչ մը ձիթապտուղ, եթէ օրն է պահք, իսկ եթէ ուտիք է՝ քիչ մը պանիր։

Գիշեր է։ Տիլիմ մը հաց, և տաք տաք կերակուր մը, որ լուբիա է, եթէ պահք է, և բաթաթէս կամ անոր պէս ուրիշ բան մը, եթէ ուտիք է։

Այսպէս կը մնանին մեր որբերը։

Եւ ինչ կ՚ուզենք որ ասրվին այսպէս մնունդ առնող թշուառներն։ Ինչպէս զարգանան, ճիշն ուռճանան։

Մի պատուական հայ ուսուցիչ, որ շատ մեծ ծառայութիւններ մատուցած է ազգային կրթութեան, և որ կը պաշտուի իր հաղարաւոր աշակերտներէ, քանի մը տարի առաջ պաշտօն վարեց հիւանդանոցի դպրոցի մէջ, ու խորապէս զգացեալ դուրս եկաւ անկէ։

Սիրտ պէտք է որ դիմանայ, կ՚ըսէր. դպրոցը կոյանոց մըն է, որուն մէջ կը դեգերին իբր սովալլուկ շուներ—ներուի բացատրութեանն—անօթի աչակերտներն։ Դպրոցին ու ննջարանին մէջ կը տիրէ դարշահոտութիւն. աչակերտներու մարմինները ծածկուած են վէրքերով. ձէթն ու ձիթապտուղ կապականեն մարմիններն այդ խեղճ տղաքներու. ամեն պահք կը բռնուի։ Շատ անգամ երկու աչակերտ կը պառկին միասին միենոյն անկողնին մէջ, անկողին մը, որ մէկ տղայ անգամ պարունակելու չափ ընդարձակ չէ։

Բարերարութիւն մը չէ՞ փակել այդ թշուառանոցը, թողուլ աչակերտներն որ երթան բաց օդին մէջ գէթ մեռնին։ Չէ, չեն մեռնիր, ամեն ուրեք կրնան գտնել պատառ մը հաց. թող կոչիկ մը ներկեն, ջուր ծախեն, բեռ կրեն, փողոցները թափառին, այլ թող հեռանան այդ նիւթապէս ու բարոյապէս ապականեալ մթնոլորդէն։

Տխրազդեցիկ է և ծերանոցն։ Ոչ առաւօտը գաւաթ մը կաթ կայ այդ տառապեալներուն, ոչ քիչ մը արգանակ, և ոչ ալ ֆինճան մը քահուէ։ Առաւօտը չոր հաց մը, զոր ծամելու անկարող են ծերերը. ցերեկը անսպասելի ձիթապտուղը կամ պանիրն, և գիշերը կամ լուբիա, կամ բաթաթէս։

Զգոնուիր ոճրագործերու բանտ մը, ուր այսպիսի տարդի կերպով և անդթօրէն մնունդ տրուի։

Հիւանդանոցը համեմատաբար լաւ է. հիւանդներու պէտքերը քիչ շատ կը հոգացուի. բայց որքան յետամնաց վիճակի մէջ։

Քանի՞ բժիշկ ունի հիւանդանոցը. երկու. օգնականներ, որք կարդաւ հոն կը կենան, որոնք ընդհանրապէս դպրոցէն ելլողներ են. ասոնք Հիւանդանոցը քիչ մը ատեն կը կենան, քիչ մը փորձառութիւն կ՚ունենան և յետոյ կը մեկնին։ Հիւանդանոցի «պիւտճէն» չը ներեր աւելի ամսական մը տալ, իսկ անոնք ալ վստահ են թէ դուրսն աւելի պիտի կրնան շահիլ։ Դարձեալ կուգան նորեկներ, որք հիւանդներու վրայ փորձառութիւն պիտի ընեն և երթան, և այսպէս շարունակաբար։

Իսկ իբր բժշկապետ մէկ բժիշկ կայ, որ շաբաթը մի՞ քանի անգամ կայցելէ։ Անկողիններուն քովէ անցնելով պէտք է բժշկէ հիւանդները. կարծես թէ այդ բժիշկը առաքեալ մը կամ սուրբ մը ըլլար, որ իրենց քզանցքովն հիւանդները կը բժշկէին։ Աւաղ, ռըտէնկօդը այդ հրաչքը չը գործեր։

Ո՞ր մէկ հիւանդին նայի բժիշկն, ո՞ր մէկ տեսակին վրայ միտք յոդնեցնէ։ Ամենադէտ է՞ այդ մարդն, ամենակարող է։

Զարմանալի է ուրեմն, որ հիւանդներն անխընամ կը մնան, զոհ կըլլան անհոգութեան, ապիկարութեան, դարմանի պակասութեան»։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Իշխան Բիսմարկ այժմ զբաղված է իր յիշողութիւնները գրելով։

—Լուր կայ, որ Թիւրքաց սուլթանը մտադիր է գնալ Բերլին Վիլհելմ կայսրին փոխադարձ այցելութիւն անելու նպատակով։

—«Nord» լրագիրը ուրախութիւն է յայտնում այն ճառի համար, որ իտալական մինիստր-նախագահ Կրիսպի արտասանել է Ֆլորէնցիայում, բանկէտի ժամանակ։

—Աւստրիական լրագիրները հաղորդում են, որ յիրաւի վերջին ժամանակներս Աւստրիայի և Գերմանիայի մէջ կապվել են մի քանի դաշնագրեր, բայց ոչ թէ քաղաքական, ինչպէս հաղորդել են շատ լրագիրներ, այլ առևտրական։

—Բերլինի լրագիրները հաղորդել են, որ Զերնոզօրիայի իշխանը դիմել է Թիւրքաց սուլթանին, խնդրելով ուղարկել մի քանի թիւրք օֆիցէրներ Զերնոզօրիայի մի քանի զօրագնդերի զինավարժութիւնները ղեկավարելու համար։ Եւրոպական մի քանի լրագիրներ հաղորդելով այդ լուրը, հեգնութեամբ աւելացնում են, որ ծիծաղելի բան արած կը լինի Զերնոզօրիան, եթէ լաւ օֆիցէրներ գտնելու համար դիմէր Թիւրքիային։

—Պորտուգալիայի ներքին գործերը խճճվում են։ Գենեռալ Սուզա դիմելով թագաւորին, յայտնեց, որ ինքը կը հրաժարվի մինիստրութիւն կազմելուց, եթէ թագուհին հեռու չի կենայ պետական գործերում խառնվելուց, և եթէ չեն դադարի պալատական ինտրիգները։

—Ֆիլադելֆիայից գրում են, որ Միացեալ-Նահանգների նախագահը հրաժարվից ընդունել Պարիզի կոմսին։

—Գերմանական մի քանի լրագիրներ խորհուրդ են տալիս կառավարութեանը շատ էլ մեծ յոյս չը դնել Իտալիայի վրա, ասելով որ Կրիսպին անկեղծ չէ Գերմանիայի վերաբերութեամբ։

—Ֆրանսիական «Siécle» լրագիրը յայտնում է, որ շուտով կը հրատարակվի երեքպետեան դաշնակցութեան պայմանագիրը, բացի մի քանի դաղտնի կէտերից։

—Մի քանի գերմանական լրագիրներ վերջին ժամանակներս ոգևորված յօդուածներով աշխատում են համոզել գերմանական կառավարութեանը, թէ Ֆրանսիան իր զօրքերի թիւը աւելացրել է, և խորհուրդ են տալիս իրանց կառավարութեանը արթուն լինել, չը խփել աչքերը և տեսնել այդ իրողութիւնը։

—Նոր գիւտ են արել Ֆրանսիական փոփոխամիտ լրագիրները.—նրանք աշխատում են համոզել, որ Կօբուրգեան պրինցը երեքպետեան դաշնակցութեան գործիքն է, և ուրիշ ոչինչ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պարիզ քաղաքը յոյս ունի գալ տարի 1/2 միլիոն ֆրանկ ստանալ շնորհի վրա դրած հարկից։

* * *

Շուտով կը սկսի տպագրվել Էմի Զոլայի մի նոր բոմանը՝ «L'argent» վերնագրով։

* * *

Պրոֆէսոր Բրունետտի հաշուել է, որ հրէաների թիւը ամբողջ աշխարհում հասնում է 7 միլիոնի։ Նրա հաշուով Կովկասում եղած հրէաների թիւը 30,000 է։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 հոկտեմբերի։ Երէկ բարձրագիր անձինք շնորհաւորում էին պետական խորհրդի անդամ և յայտնի գիտնական Պ. Բէդկինի ծառայութեան 60-ամեայ յօբելէանը։ Կայսերական «Полярная звѣзда» նաւը արագ կերպով պատրաստվում է արտասահմանեան ճանապարհորդութեան համար, որպէս զի իր ժամանակին միանայ «Память Азова» նաւի հետ, որին հրամանագրված է հոկտեմբերի 16-ին Տրիէստում լինել։

Կ. ՊՕԼԻՍ, 6 հոկտեմբերի։ Տիեզերական Պատրիարքի պահանջներին Բ. Դուռը պատասխանեց նախազգուշացնող կերպով և դրանցից մի քանիսը կատարեց առանց որ և է առարկութիւնների։ Բ. Դրան պատասխանը կազմում է անհրաժեշտ հիմունք՝ համաձայնութեան համար։ Պատրիարքը նոյնպէս կամենում է վերջ տալ վէճին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 հոկտեմբերի։ Կայսերական հասարակաց գրադարանի դիրեկտոր Բիչկով նշանակված է պետական խորհրդի անդամ։ Դանիայի հետ առևտրական յարաբերութիւնները լաւացնելու համար Կոպենհագենում և ուրիշ տեղերում հիմնվում են գործակալութիւններ՝ տեղեկութիւններ հաւաքելու և երկու պետութիւնների առևտրական դասակարգերի փոխադարձ յարաբերութիւնները դիւրացնելու համար։ Համաձայնութիւն է կայացրած նոյնպէս և դրամական փոխադրութիւնները և ուրիշ փողային գործողութիւնները հեշտացնելու վերաբերմամբ։—Պետական կօնտրոլերի 1890 թվի վերաբերեալ հաշուից երևում է, որ սովորական մուտքը եղել է նախահաշուից 61,572,000 ռուբլով աւելի. սովորական ծախսը—3,74,000 ռուբլով պակաս. արտակարգ մուտքը—53,520,000 ռուբլով աւելի. արտակարգ ծախսը—70,751,000 ռուբլով աւելի. մուտքը աւելի է ծախսից—47,843,000 ռուբլով։

ԲԵԼԳՐԱԴ, 7 հոկտեմբերի։ Կառավարող շրջաններում հարց են յարուցանում այն մասին, թէ Միլանը ի չարն է գործ դնում իր խնամակալա-

կան պարտաւորութիւնները, այլ և Միլանի ընդունակութեան մասին՝ ղեկավարելու պատանի թագաւորի դաստիարակութիւնը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 հոկտեմբերի: Երէկ վերադարձաւ ֆինանսների մինիստրը: Ակադեմիկ Բիչկովի յօբելեանը ոնվեց հաստատակաց զրաղարանում: Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը կարդաց յօբելեարին պետական խորհրդի անդամ նշանակելու վերաբերեալ հրովարտակը: Ներկայացվեցան բազմաթիւ ուղերձներ, ուղարկված են հարիւրաւոր հեռագիրներ: Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ անձամբ շնորհաւորեց յօբելեարին:

ՄՈՍԿՎԱ, 8 հոկտեմբերի: Մոսկվայի համալսարանը մրցանակ է նշանակում ռուսաց պատմութեան դասագիրք կազմելու համար, որը յարմար լինէր հիւսիս-արևմտեան նահանգների պէտքերին: Մրցանակագինը 1,000 ռուբլի է: Ամենագլխաւոր ուշադրութիւնը պէտք է կենտրոնացնվի ռուս ազգաբնակութեան վիճակի վրա հիւսիս-արևմտեան նահանգներում, նրա գործ դրած ջանքերի վրա՝ թէ ուղղափառ կրօնը լեհական-կաթոլիկ ազդեցութեան դէմ, թէ իր լեզուն ու հինական ռուս սովորութիւնները պահպանելու համար. ապա պէտք է ցոյց տալ պատմական փաստերով, որ այդ երկիրը ոչինչ ընդհանուր բան չէ ունեցել Լեհաստանի և նրա կաթոլիկ տիրապետութեան հետ:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Հոկտեմբերի 2-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արժէ. . .		80 ր.	25 կ.	
Բերլինի վրա 100 մարկ	— . . .	39	» 35	»
Փարիզի վրա 100 ֆրանկ	— . . .	31	» 8	»
Ոսկի — —	արժէ . .	6	» 51	»
Մաքսային կուպոններ	— . . .	130	» —	»
Արծաթ — —	— . . .	1	14	»
Բօրսային դիսկոնտներ	— . . .	5 և	6½%	»
Պետ. բանկի 5% տոմս	1-ին շրջանի.	101	» —	»
— — — —	2-րդ —	101	» 50	»
— — — —	3-րդ —	100	» 87	»
— — — —	4-րդ —	100	» 87	»
— — — —	5-րդ —	101	» 12	»
— — — —	6-րդ —	100	» 87	»
6% ոսկեայ փոխառութիւն	. . . .	142	» 50	»
4% ոսկեայ ըէնտա	. . . . .	—	» —	»
Արևելեան 5% փոխառ.	1-ին շրջ.	102	» —	»
— — —	2-րդ —	102	» —	»
— — —	3-րդ —	102	» 37	»
Ներքին 5% առաջին փոխառութ.		227	» 50	»
— — երկրորդ	—	212	» 50	»
— — երրորդ ան. կալ. բ.		210	» 50	»
Պետական. երկաթուղային ըէնտա	.	101	» 50	»
5½% ըէնտա	. . . . .	103	» 75	»
5% ներքին փոխառութիւն	. . . .	87	» 75	»
5% գրաւ. թղթ. ան. կալ. բանկի		100	» 37	»
4% վկայակ. գիւղ. հող. բանկի.	.	103	» 50	»
4½% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.	.	—	» —	»
— — —	թղթադ.	98	» 87	»
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիները.	.	97	» —	»
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.		95	» 87	»
Օդէսայի — —	.	96	» 12	»
Թիֆլիսի — —	.	—	» —	»
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.		—	» —	»
— — Քութայիսի —	—.	—	» —	»

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը հանդարտ է:

Ժամանակաւոր խմբագիր Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆՑ

Հրատարակիչ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՎԻԷՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ“

(ՎԵՆՍԿԻՅ ՄԱԳԱԶԻՆԸ)

ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ

ԴՈԼԳՈՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊԷԿՏԻ ՎՐԱ, ՄԴԻՎԱՆԻ ՏԱՆԸ

Ստացանք այս օրերս մեծ քանակութեամբ, ամենավերջին տարազով կարած, մարդկանց և երեխայոց ձմեռվայ և աշնան պատրաստի հագուստներ: Կրտորները ուղղակի և անձամբ գործարաններից գնելով պատրաստել ենք տուել մեր հրաւիրողութեան տակ, աւելի անտեսաբար, Մոսկվայի մեր սեփական արհեստանոցում: Ուստի, այդ հագուստները, որպէս առաջին ձեռքի արտադրութիւն, այսուհետև ծախում ենք գործարանների գներից աւելի ղիջումով: Միանգամայն ապահովացնում ենք, պ.պ. գնողներին՝ թէ ապրանքների յատկութեան, թէ գոյների և թէ ամուր կարված լինելու կողմից:

Խուդավերդեանց 1—10

ԼԻՏՕԳՐԱՖԻԱ-ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ

Գ. ԴԷՄՈՒՐԵՆԻ

տեղափոխված է Դանիլովսկայա փողոց, տուն Ղազարովի, նոտար Մամիկոնովին կից, բաղում: 1—3

Լոյս տեսաւ

ԾԱՂԿԱՀԱՏՈՒԹԵԱՆ ՀՆԱՐՈՂԸ ԴՕՔՏՕ ԶԷՆՆԵՐ

վերնագրով գիրքը. գինն է ճանապարհածախսով 20 կոպէկ: 1—3

ՄԻ ԸՆՏԱՆԻՔ ընդունում է գիշերթիկ աշակերտներ մաքէլի գներով: Աշակերտների հետ կրկնութիւններ կանեն: Նոյն տեղը կորեկի է ֆրանսերէնի և գերմաներէնի դասեր վերցնել: Հասցէն. Авчалская площадь, домъ Исарлова, квартира Лункевича. 7—10

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Շոգենաւերի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ, չորեքշաբթի 4/16 ապրիլից սկսած

ԵՒ ՓՈԽԱԴԱՐՁ

Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն, և կ. Պոլիս:

ԲԱԹՈՒՄԻՑ ՇՈԳԵՆԱՒԵՐԸ ԴՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ

Հինգշաբթի, 11/23 հոկտեմբերի	շոգենաւ	ՍԻՐԿԱՍԻ	—	ԲՕՇԵԼ
— 25 հոկտեմբերի (6 նոյեմբերի)	—	ՄԻՆԳՐԷԼԻԱ	—	ԺԻԲՈՒԷՆ
— 8/20 նոյեմբերի	—	ԱՆԱՏՕԼԻԱ	—	ԳԱԲՐԻԿ.
— 22 նոյեմբերի (4 դեկտեմբերի)	—	ՍԻՐԿԱՍԻ	—	ԲՕՇԵԼ

Տօմսակները ուղղակի երթևեկութեան Բաթումից դէպի Պարիզ իսկական գնից պակսեցրվում է:

Տեղեկութիւնների համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճեն դիմել ընկերութեան ագենտներին. ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գարանիսնին, Նաբերէժնայա, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ պ. Վիկտոր դ'ԱՐՆՕԻՆ, Միջին-փողոցում, նախկին գեներալ Տէր-Ասատուրովի տանը: 5—10 (և. և շ.)

ՆԵՐՍԵՈՒԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԵՒՈՐ ԴՊՐՈՅԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԽՍՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ հոկտեմբերի 24-ին, երեկոյեան 8 ժամին, լինելու է ածուրդ (առանց կրկնաձրդի) կապալով աւելու այժմեան դպրոցի ներքնայարկի չորս խանութները, որոնք գտնվում են 3 Աղեքսանդրեան թաղում, հին փոստայի փողոցում: Պայմանաթուղթը կտրելիք կարդալ հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, ցերեկվայ 10-ից մինչև 12 ժամն: 1—3

ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆ

Վանքի Մեծ փողոցի և Մուխրանսկի փողոցի անկիւն, տուն Ջանշիեվի: 1—5

ВЫСОЧАЙШЕ УТВЕРЖДЕННОЕ

ТОВАРИЩЕСТВО

МЕХАНИЧЕСКАГО И ЧУГУННО-ЛИТЕЙНАГО ЗАВОДА

БЕЛЛИНО-ФЕНДЕРИХЪ

ВЪ ОДЕССѢ.

Складъ и производство сельско-хозяйственныхъ и заводскихъ машинъ и орудій, какъ-то:

Постоянныхъ паровыхъ машинъ и котловъ разныхъ системъ и силъ, Мукомольныхъ мельницъ и всякаго рода принадлежностей къ нимъ. Щеретовокъ, вальцовыхъ поставовъ крупосѣекъ, буратовъ и всякихъ другихъ мельничныхъ машинъ системы Г. Даверіо. Лѣсопильныхъ станковъ съ пилами. Конныхъ молотилокъ, и приводовъ, вѣялокъ, соломорѣзокъ, кукурузныхъ молотилокъ—ручныхъ, конныхъ и паровыхъ Прессовъ для винограда и сѣна. Маслобоекъ, брандспойтовъ и пасовъ. Конныхъ грабель «Голинсвортъ».

Производство котельныхъ работъ и отливка изъ чугуна и мѣди.

Выполненіе всякаго рода заказовъ для паровыхъ вальцовыхъ мельницъ, винокуренныхъ, пивоваренныхъ, сахарныхъ и другихъ заводовъ, вагоны для конножелѣзныхъ дорогъ.

Складъ локомобилей, паровыхъ молотилокъ, конныхъ молотилокъ со штифтовыми барабанами и конныхъ приводовъ извѣстной фирмы Клйетонъ и Шутлівортъ въ Линкольнѣ, и Вѣнѣ.

Главный складъ жатвенныхъ машинъ и косилокъ «Желѣзная рама» и «Континенталь» Джонстона.

Единственный складъ вальцовыхъ станковъ Г. ДАВЕРІО въ Цюрихѣ.

Заводъ имѣетъ свой собственный эллингъ для постройки пассажирскихъ и буксирныхъ пароходовъ, паровыхъ катеровъ, баржъ и проч. и принимаетъ заказы на поднятіе на эллингъ судовъ для исправленія или окраски подводныхъ частей и ихъ корпусовъ.

Агентъ въ Ростовѣ н/Д. Г. Я. Золотухинъ, Николаевскій пер. д. Арт. Яблокова, противъ Реальнаго училища кв. № 8.

32—100 (е. ч.)

МУЗЫКАЛЬНЫЙ МАГАЗИНЪ И БИБЛІОТЕКА

Ивана А. Сузанаджянъ

Коммиссіонера Тифлисскаго Отдѣленія Императорскаго русскаго Музыкальнаго Общества подъ Тифлисскимъ Коммер. Банкомъ.

Постоянно имѣется громаднѣйшій и полнѣйшій выборъ НОТЪ въ новѣйшихъ дешевыхъ изданіяхъ, принятыхъ во всѣхъ консерваторіяхъ Россіи и Европы и получаются постоянно всѣ выдающіяся музыкальныя новости. Цѣны самыя крайныя и продажа производится по московскимъ и петербургскимъ цѣнамъ. Имѣя прямыя непосредственныя торговыя сношенія со всѣми издателями музыки, магазинъ имѣетъ полную возможность всѣ заказы г.г. иногородныхъ исполнять въ точности, аккуратно и добросовѣстно. Свѣжія Итальянскія струны. Каталоги высилаются безплатно.

Библіотека значительно обновлена, выдаются въ чтеніе болѣе 5,000 книгъ и всѣ русскіе ежемѣсячные журналы. Плата за чтеніе въ мѣсяцъ отъ 50 коп.—Въ годъ отъ 4 р. 50 коп. Каталогъ библіотеки 15 коп.

Тамъ-же по случаю продается совершенно новое піанино за 425 руб., фисгармонія за 200 руб. и поддержанное заграничное піанино за 245 руб. 3—5

Բօրժօմից վերադարձած նախկին պալատական վարժուհի վ. ԴՈՒՆԻՆ-ԲԱՐԿՕՎՍԿԱՅԱ սովորեցնում է մինչև 40 ՊԱՐԵՐ և մասնաւորապէս մազուրկա. Հասցէն՝ Լաբորատորնայա փողոց, 1 մաս № 57. 4—6

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(կուկիա, Վ. օրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—9—11 ժ. վիրաբուժութեան (և ատամնացաւի) սիֆիլիսի և աչքացաւի:
ՐՈՒԴԿՕՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—11½—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՄՈՒԽԱՐԻՆՍԿԱՅԱ—12—12½ ժ., կանանց և ներքին ց.
ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի և քթի ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12½—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիրակի:

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ԳԱԴՕՄՍԿԻ—5—6½ ժ. կաշուի ցաւերի, սիֆիլիսի և վիրաբուժութեան.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրոտերապիա):
ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—6—7 ժ.
Վճար—50 կ.: Հավախորդի (կոնսիլիումի) համար առանձին:
Հերթակալ բժիշկ—երեկ. ժ. 9-ից մինչև առ. ժ. 7-ը:

Հիւանդանոցի վերատեսուչ բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Дозволено цензурою, Тифлисъ 8 Октября 1890 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.